

Թէ ունեցած¹ ութ հազար զինուորն և հինգ հարիւր ձիերը պահել չկարենալուն համար էր որ Մակեդոնական պատերազմը ըրաւ: Այս պզտիկ Տէրութեան թագաւորը, որուն մահուը նէն ետքը ալ վրան չխօսուեցաւ, նորանոր արշաւանք ընող բախտախնդիր մ'էր, վասն զի միայն արշաւելով էր որ իր զօրութիւնը կրնար տեւել:

Իրեն գաշնակից Տարենտոնը լակեղեմոնացի² նախնեացը օրինադրութիւնը կերպարանափոխ ըրեր էր: Շատ մեծ բաներ ըրած կ'ըլլար Սամիթացոց հետ, այլ Հռովմայեցիք զանոնք անհետ ըրեր էին:

Կարբեղոնը Հռովմէն աւելի կանուխ հարստացած ըլլալով, աւելի շատ ալ զեղծաւ. զոր օրինակ, մինչդեռ Հռովմ' ամենքն հասարակաց պաշտօններու միայն առաքինութեամբ կը հասնէին, մի միայն պատուոյ և աշխատանաց նախամեծարութեամբ, Կարբեղոնի մէջ հասարակութեւ առանձնականաց տուածը վճարմամբ էր, և քաղաքացոց բոլոր մատուցած ծառայութիւնքը հասարակաց ստակովը կը հատուցուէր:

Որչափ որ վեհապետի մը բռնաւորութիւնը Տէրութիւնը քայքայման վիճակի կը ձգէ, այնքան ալ նման բախդի կը հանդիպի այն հասարակապետութիւնը՝ յօրում հասարակաց բարւոյն նկատմամբ անհոգութիւն կը տիրէ: Եկամտից աղէկ մատակարարութեամբն է որ ազատ կառավարութիւն մը նախամեծար կը համարուի. բայց եթէ աւելի գէշ ալ ըլլայ մատակարարութիւնը, դարձեալ Ազատ Տէրութիւն ընտրելագոյն է՝ մարդահաճոյ շողմարարներ չունենալովը. բայց եթէ անոր հակառակ և փոխանակ վեհապետին բարեկամացն և ազգականաց պէտք ըլլայ տէրութեան գլխաւորաց ազգականքը և բարեկամքը հարստացընել այն ատեն ամենայն ինչ կորսուած է. չարագոյն վախճան և աւերումն կ'ունեն.

նան օրէնք՝ երբ թագաւորն ինքնին օրինադանց կ'ըլլայ, որ Տէրութեան առաջի քաղաքացին ըլլալով անոր պահպանութեանը աւելի մեծագոյն շահ ունի:

Հին սովորութիւնք, աղքատութեան վարժութիւն մը, Հռովմայ մէջ հարբստութիւնը հաւասար կը պահէին, այլ 'ի կարբեղոն առանձնականք թագաւորապէս ընչեղք էին:

Կարբեղոնի մէջ տիրող երկու կողմնակցութեանց՝ մին միշտ խաղաղութիւն կ'ուզէր, միւսն ալ անդադար պատերազմ կը պահանջէր. անանկ որ հոն, անկարելի էր ոչ մէկը վայելել և ոչ զմիւսը յաջողութեամբ կատարել:

Թարգ. Կ. Ր.

Կը շարունակուի:

ՅՈՒՅԱԿ

ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՑ ՅԻՏԱԼԻԱ

ՎԵՅԵՐՈՐԴ ԴԱՐԷ ՄԻՆՁԵՒ Ի ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՍ

(Տես երես 24.)

Բ. Յեղանակ (1073-1499).

Հիլտեպրանտի ատեն և անկէ ալ առաջ շատ աստուածաբանք, իմաստասէրք և դպրոցականք՝ մեծ անուն հանած էին. որոց մէջ յիշեցինք զՍ. Անսելմոս եպիսկոպոս Լուկայ, Լանկֆրանկ Բաւիոյ՝ որ Նորմանտացի կրօնաւոր մ'էր, բարեկամ Աշխարհական Գուլիելմի, և ասոր ձեռքով կանդորբերայ արքեպիսկոպոս անուանուած. ինչպէս էր նաև Ս. Անսելմոս Աստուայ, որուն փիլիսոփայական գերազանցութեանը կը վկայեն արդի իմաստասէրք ալ: Պետրոս Լուկայրոս Բարիգու եպիսկոպոսն, վճռոց վարդապետ մականուանեալ (1164), Պետրոս Գոմեսորոս (1198), Իմնովկենտիոս Գ. Պապ (1216), մեծն Ս. Պոնապետիս (1221-1274),

¹ Կենսագրութիւն Պիտագորասի:

² Յուստինոս, Գիրք 20. Գլ. Ա:

և գերահռչակն Ս. Թումաս (1226—1274), երկուքն ալ վարժապետք 'ի Բարիդ. անուանի հեղինակք, գերագոյնք քան զօտարազգիս ժամանակին, ինչպիսիք են Գուշիելուտը Ղաւնըս (Champeaux), Ապելյար, Ս. Բեռնարդ և Մեճն Ապելրդ: Ասով ալ կ'իմացուի որ իտալացւոց արդիւնքն եղած է միացընել երկու գիտութիւնները, զաստուածաբանութիւն և զիմաստասիրութիւն, և մացընել յԱնգղիա և 'ի Փրանկիա, և զըլխաւորապէս 'ի համալսարանն Բարիդու, որմարդկային գիտութեց վառարան մ'էր այս յեղանակիս մէջ. յորում յիտալիա երկու վարժարանք ալ կը կանգնէին, 'ի Սալեռնոյ՝ Բժշկութեան, 'ի Պոլոնիա՝ իրաւագիտութեան: Առաջինն բացուեցաւ Բենեդիկտեանց վանքի մը մէջ, 'ի Ս. Կասսին լերին (Monte Cassino), յունական և արաբական սկըզբամբք, որք աւանդութեամբ մինչև այն ատեն հասած էին՝ գիտնոց զրուածներով, և մեծ եռանդեամբ կը կատարելագործէին, ինչպէս որ 'ի Պաղեստին ալ հաստատուած Անկելանոցք և Ուրկանոցք:

Իսկ իրաւագիտութեան լսարանն հաստատեցաւ 'ի Պոլոնիա, կամ անոր համար որ այս քաղքիս մէջ ճոխ հաւաքում կար հռոմէական օրինաց մատենից, և կամ անոր համար որ զիպուածով հօս եկեր էր ԺԲ դարուն գերագոյն իրաւագէտն՝ Իռնէրիոս. որ առաջ Գերմանացի կարծուէր, բայց նոր ատեններս ստուգեցաւ որ իտալացի էր. իրմէ վերջն այս գիտութիւնս շատ մչակեցաւ 'ի Պոլոնիա, մինչև բոլոր իտալիոյ մէջ առաջին համալսարանն համարեցաւ: Իր աշակերտաց մէջ անուանի եղան Պոշկար, Մարտինոս, Ուգոյ և Յակոբոս. այս ետքինս շատ պարսաւում է մեր պատմութեան մէջ, Ափրետերիկոսի ատեն՝ չարաչար կերպով հռոմէացի կայսերական օրէնքները՝ իտալական ազատութեան և անկախութեան դէմ բանեցընելուն համար: Բայց այս ալ խոստովանելու է որ այսպիսի կիրառութիւնք և անոր պատճառաւ

ծագած հակաճառութիւնք՝ գիտութեղարգացման և ծաւալման օգտակար եղան: Պոլոնիացի իրաւագիտաց համբաւն տարածեցաւ 'ի բոլոր Եւրոպա, մանաւանդ իռներիոսէն մինչև Ազգուրսոյի ժամանակ (1260):

Այս երկու դարուց մէջ ռամկական ըսուած լեզուներն՝ որ միայն խօսակցութեան կը բանէին, և հազիւ երբեք զրելու, այնքան ծաղկեցան որ գրաւոր լեզու դարձան. այսպիսի են հին Սլաւոնիացի լեզուն, Բրովենսալ կամ լանկ տ'Օք (langue d'Oc) ըսուածն 'ի հարաւային Գաղղիա, և լանկ տ'Օիլ (langue d'Oïl) 'ի հիւսիսային Գաղղիա, հին իտալերէնն՝ որ և Սի (Si) լեզու, ուսկից առաջ եկան հիմկու հարաւային բարբառներն: Սովորաբար կարծուին որ հարաւային ազգաց լեզուք, որք շատ արշաւանաց ենթակայ չեղան շատ ալ չայլոյլեցան՝ օտար և բարբարոս տալլերներով, այլ աւելի զուտ պահեցին հին լատինը. սակայն պատմական դէպք չեն ստուգեր այս բանս. վասն զի Սլաւոնիա և իտալիա՝ որք քան զփրանկաստան աւելի զուտ կը պահեն լատին տարրը, աւելի քան զայն արշաւանաց տակ ընկան: Այսպէս ալ Փրանկաստանի հարաւակողմն, որ միջնաշխարհէն և հիւսիսակողմէն աւելի ոտնակոխ ըլլալով բարբարոսաց՝ գեռ պահած է զլատինն: Բայց պէտք չէ ալ կարծել թէ այս իտալական՝ սլաւոնական և Բրովենսալ լեզուաց աւելի լատինականութիւնն՝ աւելի առաջ Հռոմայեցւոց իշխանութեան տակ ընկնալէն ըլլայ. ոչ. վասն զի եթէ այսպէս ըլլար՝ պէտք էր որ իտալիոյ մէջ աւելի ըլլար այս ազգեցութիւնն՝ քան մէկալ աշխարհաց մէջ, և մանաւանդ 'ի Սլաւոնիա՝ ուր աւելի լատինական հնչմունք և ձեւք կան: Մեզի կ'երևի թէ այս լեզուաց՝ լատինականին մերձաւորութիւնն առաջ եկած ըլլայ այն լեզուաց նախնական իրարու առնչութենէն, այսինքն լատինին կամ հին իտալականին, ընդ գաղղիական Լիգուրացւոյ, և ընդ իրերացւոյ Սլաւոնիոյ: Դիտելու բան է որ մեր

իտալացի ռամկական լեզուաց ծագումն . յ'ժԲ-ժԳ դարս՝ մի և նոյն ժամանակի թէ Դոսկանայի մէջ թէ հարաւային Իտալիոյ մէջ եղած է: Մանաւանդ թէ կարծեմ որ Սիկիլիոյ և Սարոսնիոյ մէջ աւելի արմատացեալ էր լատինն քան ուրիշ կողմեր. վասն զի առջինին մէջ բնակէին հին Իտալացի և Սիկիլիացի ժողովուրդք, ետքինին մէջ Լիգուրացիք, որոց ձայնից և հնչմանց մէջ ինչուան հիմայ լատինական կերպ կրպահուի. և հոն աւելի կը գործածուի Իտալական ռամկական լեզուն և իր բարբառները:

Արդ այս ռամկական լեզուաց մէջ՝ որք ծաղկեցան յ'ժԲ և ժԳ դարս, ամենէն յառաջագէտն եղան փրանկաց Օք և Օյիլ բարբառք: Լեզուաց յառաջագիմութիւնն ալ խօսող ազգին գործունէութենէն և արժողութենէն կը կախուի. արդ ժԲ և ժԳ դարուց մէջ Եւրոպէացւոց մեծ գործունէութիւնն եղաւ խաչակրութիւնն. այս գործոյս մէջ ալ ամենէն աւելի փրանկք ժրացան. և երբ յարեելս և յարեմուտս քրիստոնեայ ազգք իրարու խառնուեցան՝ փրանկք աւելի բազմութիւնք էին. ասով իրենց երկու բարբառքն ալ ամեն ուրիշներէ աւելի գործածուեցան: Արդեամբք իրաց յայտնի է որ Դրուշվէր (Trouvères) ըսուած վիպասանից բանաստեղծութիւնք, և արձակ շարագրութիւնք քաջ ժամանակագրաց, ինչպէս են վիլ Հարտուէն և Ժոսկովիլ, Օք և Օյիլ լեզուք՝ յառաջեցին քան զիտալականն, քան զոր կանխեց նաև սպանիացի լեզուն, որ և զարգացաւ Սիտի (Cid) երգով, վիպապատմութեք և օրինագրութեամբք: Մեր առաջին բանաստեղծքն՝ Ֆրոկտիդոյ, Գալլի և Տորիա ճենովացիք, Նիգոլեդոյ Դուրինցի, Գեորգ վենետկեցի, Սորտելլի Մանդուացի, և Պրոնկեդոյ Լադիլի Ֆիորենցացի, ամենքն ալ ժԳ դարուն մէջ փրանկերէն կը գրէին. և կ'ըսուի թէ Ս. փրանկիսկոս (Սասիզացի) այս լեզուն խօսելուն համար՝ այդ անունը վրան դրին, որ յետոյ իրեն յատուկ ե-

ղաւ. փրետերիկոս Բ և բոլոր իր սիկիլիացի արքունականք փրանկերէն կը գրէին իրենց քերականները, յառաջ քան իտալերէն քերականոց երևնալը: Ամենէն ուշ իտալերէն լեզուա վիպապատմութիւնք գրուեցան. բայց ուրիշներէն աւելի կարգաւորութեամբ շարունակեցան: Իտալերէն ռամկական և գաւառացի բարբառներով բանաստեղծութիւն գրողքն են Տրուզի, Լուչիոյ, Բիզակոյ (1190), Զիուչիոյ տ'Ազաւոյ 'ի Սիկիլիա, Պետրոս Տելլա վիկեսա՝ Բ փրետերիկոսի քարտուղարն (1248). Կուչիտոյ Կիլիգիէրի Պոլոնիացի, Տաւնդէ տէ Մայալոյ Դոսկանացի, Նիկու Սիկիլուհի (1280), Կուչիտոյ Կուչիլիչի Պոլոնիացի: Իսկ արձակաբանք, Բիզարտոյ տի Սաւ ճերմակոյ, Կուչիտոյ Պոլոնիացի, Նիկոյ տէ Եաւսիլլա (1268), Ս. Պոնապետիստոս (1274), Նիկոյ Զմերակոյ վիչենցացի, Մալաւսիլի (1281), Տիկոյ Գոմբալեի (1260-1323). Այս անուններս կը վրկայեն որ մեր իտալական լեզուին սկսան ասոնք մշակութիւն տալ և դարութիւն մը կազմել՝ երկու դար յառաջ քան զբուն գրականութիւն իտալիոյ և անոր երեք հոչակաւոր մատենագիրները, որք զարմանալի և մեծահոչակ ըրին մեր դարութիւնը: Մեր լեզուն և մեր հոչակաւոր հեղինակքն կամաց կամաց զարգացան, ինչպէս որ ամեն բանի մէջ կը հանդիպի, և երկու դար Եւրոպիոյ ամեն գրագէտներն ալ զարմացուցին. այս առաւելութիւնս ուրիշներու վրայ՝ իրենց վայելած քաղաքական ազատութենէն առաջ կու գայ:

Ինչպէս որ նշանակեցինք՝ արուեստք իտալիոյ մէջ սովորաբար կարծուածէն դար մ'և կէս առաջ սկզբնաւորեցան, նախ ճարտարապետութիւնն, յետոյ քանդակագործութիւնն և պատկերահանութիւնն: Բիզայ քաղաքին մայր եկեղեցին՝ իտալացի արուեստին և ճարտարաց առաջին մնացեալ յիշատակարանն է. հոս յամին 1152 Տիոդիլաւի Սիննային աւարտեց Մկրտարանին շէնքը. յամին 1174 աւարտեցաւ Զանգա-

կատան շինութիւնն, որ կըրնայ ըսուիլ
թանգարան մը մանր սեանց և հին շի-
նից մնացորդաց. այս աշտարակիս ճար-
տարապետքն են Պոլսական և Թոմար
Բիզացիք: Բիզա արդարեւ խանձարուրդ
մ'եղաւ ճարտարպետութեան և իտա-
լական արուեստից. վասն զի թէ վե-
րոյիշեալ արուեստաւորքն և թէ յե-
տագայք, նաև անոնց ամենէն գերա-
զոյնն Նիկոյ Բիզացի (1280) ամենքն
ալ թէ ճարտարապետ էին թէ քանդա-
կողք: ճարտարպետութենէ 150 տարի
ետեւ, քանդակագործութիւն ալ 60 կամ
80 տարի վերջը երևցաւ իտալական
նկարչութիւնն, որոշ 'ի յունական ա-
րուեստէ, 'ի ձեռն ճիւղայ Բիզացւոյ,
Կոնստոյ Սիննացւոյ, Մարգարիտոնի
յԱրեցցոյ, և Չիմապոնի Ֆիորենցացոյ
(1300): Պոսգեղդոյի ձեռքով և Բի-
զայի կաթողիկէին հետ սկսեալ իտա-
լական արուեստն՝ երկու դարուց միջոց
զարգանալով՝ այս Չիմապոնի և ճիւղ-
դոյի ձեռք հաստատուեցան, և բերին
փլորենտեան արուեստին յեղանակը՝ որ
իտալական ճարտարութեան ամենէն
նշանաւոր յեղանակն է, վասն արագա-
րագ և ամենապատիկ բարգաւաճա-
նացն:

Այս միջոցիս ամենէն գերազանցողն
հանճարաւ եղաւ Տաւոյէ. ծնեալ յամի
1265, անաւ և զարգացաւ փլորենտեան
աղատութեան յաղթանակաց մէջ, 'ի
նորածնութեան իտալական բանաստեղ-
ծութեան. իր հանճարոյն ծաղկելուն
յարմար ժամանակ մը: Առջի երիտա-
սարդութենէն մաքուր սիրով մը վա-
ռուած, չկրցաւ անով անվտանգ մնալ.
քաղաքական կենաց վիճակը փորձել
ուզեց. մերժուեցաւ և աքսորեցաւ իր
կարծեաց չափաւորութեան, և զանոնք
շատ տաքութեամբ պաշտպանելուն հա-
մար. որ որչափ զգայուն սրտից բնա-
կան կիրք մ'է՝ ռամկաց անիմանալի է:
Իր հայրենի քաղաքէն վազնտուած՝ սկը-
սաւ բանաստեղծական հանճարը բանե-
ցնել, գրելով իր անմահացեալ քեր-
դուածը, միանգամայն իմաստասիրա-
կան, քաղաքագիտական, կրօնական

և սիրալիր. քերդուած մը՝ որ ձեռովը
շատ չի տարբերիր իր ժամանակակցաց
գրածներէն, այլ զամենն ալ կը գերա-
զանցէ վսեմութեամբն և մոռածութեց
ուժովը. և որ հին և նոր դարուց ամե-
նէն կատարեալ քերդուածոց հետ կըր-
նայ դասիլ՝ իր յստակութեամբը, չքե-
ղութեամբը և ընտիր չափաբերութիւնը:
Յետ քսանամեայ աքսորանաց պանդխ-
տութեան մէջ մեռաւ Տանդէ, յամի
1321: Կը մեղադրուի քաղաքականու-
թեան մէջ ազգային կողմնակցութենէ
հեռանալուն համար, զայն չափազանց
տեսնելով, միանգամայն այլանդակեալ,
և բարկութեամբ անոր հակառակ կող-
մը անցնելուն՝ որ օտար էր իրմէ, և
գերկուքն ալ արհամարհելով, մինչդեռ
կ'ուզէր պաշտպանել զինքնակալութիւնը՝
թէ քերդուածին մէջ և թէ Յաղագս
Միսպետոռքեան անուամբ գրուածին:
Բաց այս դիպուածէն և քանի մ'ալ
անձնական փոքր վրէժխնդրութիւննե-
րէ՝ որ իր քերդուածը անմահացողին,
Տանդէ և իր քերդուածն մեր դպրու-
թեան մէջ ամենէն մեծաշուք և ամե-
նէն պատկառելին են. ինքն՝ աքսորա-
նաց նեղութիւնը կրելու և օտար արքու-
նեաց գողող պաշտպանութիւնները մեր-
ժելուն, և իր հայրենեաց ամբարտա-
ւան ներողութիւնը մերժելուն համար,
յանձն առնելով զրկուիլ գործունեայ
կենսութեան մը՝ զոր չէին թողուր իրեն և
զոր չէր կըրնար գտնել գրաւորական
կենաց մէջ, յորում ստացաւ զմեծու-
թիւն և զփառք. իսկ իր քերդուածն՝
ըլլալով այնպէս կորովի 'ի սէր, 'ի բա-
րոյականի և 'ի քաղաքագիտութեան,
և այնպէս ճշգրիտ ոգւով և հոծ իմաս-
տիւք՝ կարգացողին յիշողութիւնը կը
յոգնեցնէ. սակայն ազգային գրակա-
նութեամբ մեղկեալ իտալական մտայն՝
յարմար զօրաւոր և առողջ կրթութիւն
մ'է. այս կրթութիւնը փնտռելու է այս
քերդուածին մէջ՝ քան հեղինակին քա-
ղաքական կարծիքները, որք շատ հեղ-
նաւ հակասական են. այս կրթութիւ-
նը՝ որ այնպէս երկիւղածութեամբ մը
բացատրուած է քերդողին գրուածին

մէջ շատ կարևոր և յարմար կը դատին անոնք որ կը փափագին զօրացընել ազգային ջլատեալ ոգին : Միով բանիւ Տանդէ կը գերազանցէ նաև քան զայն մատենագիրս՝ որք իրեն հետ մեր լեզուին և դպրութեան հարք կ'անուանին :

Ասոնցմէ է Բեդրարգա (1304-1374), որ շատ ձիրք և արժէք ունի . նախ գերազանցելով քան զամենայն երգիչս սիրոյ որ և է ումանիկ լեզուաւ . և ապա վասն երգելուն զիտալիա այնպէս ազնիւ և արդար դատմամբ, լաւանց Տանդէի սկզբանց . և դարձեալ ինքն ըլլալով յետ Ս . Թոմայի ամենէն աւելի նախանձորդ և վերանորոգող հին դպրութեանց Յունաց և Լատինաց : Տանդէ այս ումանիկ և քնարերգական բանաստեղծութիւնը երեսէ ձգեր էր . իր հանձարն աւելի բարձր թռչիլ կ'ուզէր . այս տեսակ բանաստեղծութիւնս՝ որչափ ալ զեղեցիկ, յանկուցիչ և չքնաղ ըլլայ, բաց ի լեզուն յստակելէն, շատ դժարաւ կըրնայ մեծցընել դպրութիւն մը և բարձրացընել ազգ մը . այս պատճառներու համար է որ Բեդրարգա ալ այս տեսակ քերդողութեան մէջ շատ արդասաւոր չէ . և թէպէտ ազգային բանաստեղծութեանցն համար ժողովրդական երգիչ մ'եղած է, սակայն ոչ իբրև զՏանդէ վսեմացեալ : Ի վերայ այսր ամենայնի Բեդրարգա մեր ամենէն մեծ մատենագրաց և գիտնոց մէկն է :

Պոգգալչիոյ (1315-1375) մեր լեզուին երրորդ հայրն է . բնաւորութիւն քաղցր, զուարթ, զգայուն, և աննախանձ ուրիշներու հռչակին . բայց զըրուածներն իր հայրենեաց հաւասարապէս օգտակար և մշտասակար եղան : Աւելի սիրող էր հին հեղինակաց և մատենից . սակայն պարզեց մեզի մեր մեծ բանաստեղծին վարքը, և դասարան մը հաստատեց անոր քերդուածը կարդալու և քննելու : Ախորժելի ոճով դրութեան գերազանցեց իր ժամանակակիցները՝ Նորապէս (Nouvelle) գրելու մէջ, թէպէտև այսպիսի գրուածք

շատ օգտակար չէին . իրեն մեծ յանցանք է որ չկրցաւ այս կերպ դպրութիւնը բարոյական և քաղաքական նըպատակի մը դարձընել, ինչպէս այն՝ զոր ըրին Սերվանդէս ի Սպանիա, Ֆենելոն ի Փրանկիա, Վոլգըր Սգոդ յԱնգղիա, Մանձոնի յԻտալիա, և այլն . ընդհակառակն այսպիսի նորավիպիցնութիւն զուարճութիւն և շատ հեղ անառակութիւնն է : Մեծ արձակաբան զրիչ մ'եղաւ, այլ միանգամայն և աղուաչ, և քանի մը հին հեղինակաց այս կերպ ոճին հետևող : Իտալական արձակ գրութեան ճամբայ բացաւ հետևելու լատինականին, բայց այս բանս աւելի ատելի քան բնական է մեր լեզուին : Շատ ցաւալի է որ այսպիսի ախորժելի և մեր արձակ գրութեան հայրն և օրինակն՝ այսպիսի թեթևօրիկ Նորավիպաց զըրիչ մ'ըլլայ . մանաւանդ երբ մոքերնիւ բերնէր որ մեր դրացիքն՝ Փրանկը՝ իրենց արձակաբանութեան օրինակագիր կ'ընծայեն երկու փիլիսոփայ, Տէգար և Բասգալ : Սակայն այս այլ պէտք չէ մոռնալ՝ որ այս մշտաս մեր շուտով հասունութեան կամ փառաւոր առաջնութեան արգասիքն է : Պէտք չէ ուրեմն այնքան մեղադրել այս մեր լեզուին նախնական հանձարները, որովհետև ժամանակ չունեցան իրենց զարգացումը յառաջ տանելու, ինչպէս որ ունեցան Փրանկը՝ անոնցմէ գրեթէ 400 տարի վերջը գալով : Աւելի պէտք է մեղադրել յետոյ եկածները և մեր ժամանակակիցները, որք կամ մոլութիւն կամ ազգայնութեան անհանձար նմանողութեամբ՝ մեր լեզուին նախահարց ոճէն չեն ուղեր հեռանալ : Նմանողութիւննին ալ անկատար է . որովհետև ոչ կըրնան անոնց ընդարձակ և ընտրական հնարագիւտ հանճարոյն հաւասարել, ոչ հին և նոր գեղեցկութեանց լաւ հետաքննիչ միտք մ'ունին, որով կարենային ընտրել զդասընտիրն և ըզվիպահնարն, զազգայինն և զօտարն . միայն եղանակին և ձևին մէջ է իրենց նմանութիւնն, զուարճացընելուն, և կըրնանք ըսել թէ մեր նախնեաց ա-

դուաշաբանութեանը մէջ . մանաւանդ եթէ բաղդատուին Պողոզաչիոյ հետ՝ որ ծիծաղելով կը գրէր : Ո՛րչափ աւելի պիտի ծիծաղէր, եթէ կարգալու ըլլար այս օրերուս քանի մը նմանաբանողաց հետեակ, դանդաղ և բռնաճիգն դըրուածները :

Այս երեք մեծ մարդկանց քով (Տանդէի, Բեգրարգայ և Պողոզաչիոյ) գրեթէ կ'անհետանան իրենց բոլոր ժամանակակից քերդոքը և արձակաբանը . ինչպիսիք են Կոշիտոյ յԱրեցցոյ (1294), Պրոշնեդոյ Լատինի (1294), Կոշիտոյ Գաշալգանդի (1300), Ֆացիոյ (degli) Ուպերդի (1360), Պետրոս Գրեշեկցիոյ փիլիսոփայ և ազարակագիր (1320), Չիւնոյ Բիսդոյացի (1330) և Պարդալ (1356) իրաւագէտը : Եւ սակայն դեռ արժանաւոր են ասոնք այն երկից մեծ մարդկանց քովը կենալ ոչ շատ հեռու, իբրեւ ընկերոք :

Միայն աստուածաբանութիւնն և նկատողական փիլիսոփայութիւն բաց 'ի Ս . Կատարինեայ Սիննացոյ (1373) և 'ի Ս . Բրիճիդեայ (1380), այս դարուս մէջ չմշակուեցան յիտալիա : Սակայն այս բանիս վրայ պէտք չէ շատ վշտանալ . որովհետեւ այս տեսակ գիտութիւնք իսկապէս զարգացական չեն, և յետ Ս . Թովմայի պէս աստուածաբանի մը՝ աւելի ընտրելի էր իտալիոյ լուրը քան թէ ճառելը անդրալեռնեայ վիճաբանութիւնները : Ասով այն իրականաց և Անուանականաց հակաճառութիւնքն շատ չնեղեցին զիտալիա . և 'ի բաց առեալ քանի մը դէպք՝ այն բնազանցական նրբութիւնքն չարմատացան մեր կողմերը : Իտալական միտքն 'ի բնէ յստակատես է, չի սիրեր զմթութիւն և կը խորշի խաւարաբեր մէգերէ :

Ասոնց տեղ այս գործունեայ դարուս մէջ արուեստական և աշխարհագրական զիւտը շատ յաջող եղան : Արուեստից մէջ նախ Չիմասպուէ (1300) և յետոյ Ճիոդոյոյ (1336) որ գերազանցեց իր վարպետը, յունական պատկերհանութեան նմանողութիւնը փո-

խեցին 'ի նմանութիւն բնութեան : Իրենց ալ հետեւեցան շատ Ֆիորենցացի նկարիչք, որոց մէջ աւելի նշանաւոր են Թադէուս (1350), Կաւուտի (1380), Օրիւսկեսա, Մեմմի (1344), և այլն : Սոյն արուեստագէտք ճարտարպետութիւն և քանդակագործութիւն ալ զարգացուցին . մեծ համբաւ ստացան Աւնոլֆոյ-տե-Լաթոյ՝ ճարտարապետ և անդրիագործ, որ Ֆիորենցայի հռչակաւոր Ս . Աստուածածին չքողկանց եկեղեցւոյ առաջին ձեւը հնարեց և աշխատանքը սկսաւ, և Անդրեսս Բիդաւնոյ (1350), որ Ֆիորենցայի Մկրտարանին առաջին դուռը քանդակեց : Ինչպէս կը տեսնենք՝ այս զուգակ արուեստները՝ մի և նոյն արուեստաւորը կը բանեցընէին . և որչափ որ անոնց յառաջադիմութիւնը քննենք՝ այնքան իտալական հանճարոյն գերազանցութիւնն կ'երևի : Այս գերազանցութեան առիթքն էին դպրութիւնք և արուեստք . և անոնցմէ աւելի՝ այն մեծ քարոզիչքն և նաւորք՝ որք Տանդէէն քիչ մ'առաջ ելան և անոր բոլոր դարուն մէջ բազմացան : Ասոնք էին կարապետք Գոլոմպոսի, այն Տանդէէն մեծ իտալացւոյն, որուն ըրած գործն բոլոր մարդկութե բաղդին վրայ ազդեցութիւն ունեցաւ : Չենք կրնար չըճանչնալ՝ որ մեր կրօնից ծաւալիչ հոգւոյն և անոր գլխաւորաց արդիւնքն է յառաջ մղող այս իտալական փորձախնդիր հանճարոյ և վաճառականական ոգւոյն, որ շատ զօրացեր էր այս ատեններս :

Յովհանն Գարբիւնոյ (1246), Անդրեսս Լոնձիւնցոյ (1259) և Բարդուղիմէոս Գրեմոնացի (1253) կրօնաւորք և քարոզիչք՝ ինչուան Մողոլաց երկիրը ճամբորդեցին և քարոզեցին : Անձելիւնոյ Գոմինիկեանն յամին 1254 դեսպան զրկուեցաւ Պարսկաստանի կողմնակալ Թաթար զանին : Ասկէ վերջը կը ներկայանայ մեզ մեծ կերպարանք մը, վենետիկեցին Մարգոյ-Բոյոյ (1270-1295), որ աւանդեց մեզի ստորագրութիւն Մողոլաց, Թաթարաց, Չինաց և Հնդկաց աշխարհներու, և բոլոր ձին-

կիզխանի որդւոց և թողանց տիրած երկիրներուն, ուր որ ինքնին պտըտեցաւ և բնակեցաւ յառաջ քան զգալն և զկրեւն նախատինք իր քաղաքակցաց, և հալածուած ու մոռցուած մեռնիլ իտալական բանտի մը մէջ: Իրմէ վերջը Ասիոյ կողմերը գացին և ծանուցին փրանկիսկեանն Օտտերիկ Բորտեւնուցի (1314-1350), Մարկոս Գոռնարոյ վենետկեցի (1319), Բեկոյեդդի (1335), և Մարին Սաւուդոյ (1325):

Արժանի է յիշատակութեան և լեռնարտոյ Ֆիպոնուչի Բիզացի վաճառականն, որ զիւրացոյց գրահաշուի ուսումը, զոր կ'ըսուի թէ ժէրպէր մտուց յԱրաբացոց առած, կամ ինքն հնարեց:

Փյաշիոս Ճիոյա Ամալֆիացի մտուց յիտալիա կողմնացուցի գործածութիւնը իբր յամի 1300. ասոր վրայ փրանկը կը հակառակին և իրենց կ'ընծայեն առաջնութիւնը: Մենք ալ չենք հակառակիր վառօդի գիւտին վրայօք, որ քիչ մը վերջը հնարեցաւ բաւական պարծելու բան ունինք, և աւելորդ կը սեպեմք երկրայականաց վրայ ալ վիճիւն. անտարակոյս է որ Տանգէի դարն մեծ և արգասաւոր եղաւ արուեստական և գրաւորական գիւտովք, եթէ փոքր և զրեթէ ոչինչ էր քաղաքական մասամբ, ինչպէս որ կը խոստովանի ինքնին Տանգէ:

Կը շարունակուի:

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

ՆԱԾԱԿ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

(Տէս երես 17:)

Դասակարգող շքիւն կենդանեաց:

« Վտանգաւոր է յայտնապէս ցուցնել մարդուս թէ որչափ հաւասար է

անասնոց, առանց հաւաստելու անոր իր գերազանցութիւնը: Նմանապէս ալ վտանգաւոր է յայտնապէս ցուցնել իր գերազանցութիւնը՝ առանց նուաստութիւնը հաւաստելու: Բայց և այնպէս աւելի վտանգաւոր է երկուքին ծանօթութենէն ալ զինքը անգէտ բռնել: Շահաւէտը և մեծապէս օգտակարը թէ մէկին և թէ միւսին նկատմամբ զինքը ծանօթացնելն է »: (Բապալ. Խորհրդ. զԼ. Դ):

Այդ տողերը գրողը, սիրելի օրիորդ, այնչափ փոյթ չունէր պզտի աղջկանց վրայ: Գաղղիական մատենագրութեան ամենէն վսեմ հանճարներէն մէկն է. մարդ մը որ գրեթէ տղայութիւն ունեցած չէ, որովհետեւ տասուերկու տարուան հասակի մէջ, ըստ որում որ կը պատմուի, երկրաչափութիւնը ինքնիրեն մինակ հնարելու ետեւէ էր, եթէ հայրն զինքը աշխատութենէ ազատելու համար, ժամանակին չհասնէր ու գիրքը ձեռքը չտար. իսկ տասներհինգ տարուան հասակին մէջ կոնսկան հաւտուածոց վրայ անանկ ճառ մը դրեց, որ նոյն իսկ իր ժամանակակից գիտնոց մեծ զարմանք ազդեց: Ես որ քեզի հիմա կը խօսիմ, կոնական հատուածք ինչ ըսել է չեմ գիտեր. բայց անոր համար միայն կը զուրցեմ քեզի ատիկայ՝ որ հասկնաս թէ մեծապէս սուր միտք ունեցող մէկ մըն էր այդ մատենագիրը, և ես մեծապէս ուրախ եմ այնպիսի մէկի մը հեղինակութեանը ներքեւ պատասպարելու, հիմա՝ որ կը պատրաստուիմ ցուցնելու քեզի այն ստուգապէս ահաւոր նմանութիւններն որ կան ընդ կենդանին և ընդ քեզ: Քու գերազանցութիւնդ ցուցնելէն լաւագոյն բան չեմ փափաքիր: Եւ այդ գերազանցութիւնդ ոչ թէ այն մետաքսեայ հանդերձին վրայ է որ քեզի կը հագուեցնեն, կամ թէ մօրդ սենեկին բազմոցներուն վրայ, հապա այդ փոքր ողւոյն վրայ է, որ 'ի քեզ կը սկսի ծագիլ, ինչպէս արեւը երկնից վրայ, երբ առաւօտեան մառախուղը կը ճեղքէ: